կանգ առնել եւ պարզել Պարթեւ–Պահլաւ–
ների ծագման, զարգացման էական կետերի
վրայ, որոնք այնպիսի թանձր քողով են պա–
տած, որ որքան էլ շատ քննուի, այնքան
նպաստաւոր եւ օգտակար է մեզ համար:
Խորենացու ցուցումների համաձայն Պարթեւ
առաջին դահակալ Վաղարշակի միայն գլխա–
ւոր գործն է լինում կարգի բերել նախարա–
կան տների իրաւունքներն ու աստիճանները:
Անշուշտ նախարարներին եւ թագաւորներին
չէր կարող այնքան հետաքրքրել, թէ ո՞ր
նախարարը, ո՞ր աստիճանին տեղ պիտի
բռնէ արքայական սեղանի շուրջը, այլ ո՞ր–
քան է այս կամ այն նախարարութեան կա–
լուածների տարածութիւնը: Արեւելքում
քաջերը սահման չունին, նրանց սահմանը
սրով է որոշւում, այս պատճառով երեւի
միշտ ծանր եւ երկարատեւ վէճեր են եղել
նախարարական կալուածների շուրջը. Վա–
ղարշակը տքնել է բարեկարգել եւ հաշտեց–
նել: Սկզբնական աշխատութիւնը ամբողջ
Հայաստանի գաւառների բաժանման կանո–
նաւորումն է, որ վէճերը ջնջուին եւ խրժդ–
ժութիւնները, իրար դէմ յարձակումները
դադարին:

Չի կարելի ասել, որ նախարարութիւն–
ները կերպարանաւորում եւ դիրք են դրա–
ւում Պարթեւների օրով, ո՛չ. այդ նախարա–
րութիւններն այնքան հին են, որքան հին է
Նայիրի երկրի բնակչութիւնը, Հայաստանի